Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
ապրիլի 18-ի N 523 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են էկոպարեկային ծառայության (այսուհետ՝ ծառայություն) ծառայողի (այսուհետ՝ ծառայող) հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները պահելու և կրելու հետ կապված հարաբերությունները:

2. Ծառայողին պահելու և կրելու իրավունքով հատկացվում են ծառայության սպառազինության մեջ ընդգրկված հատուկ միջոցներ և անձնական պաշտպանության միջոցներ:

3. Ծառայողին պահելու և կրելու իրավունքով հատուկ միջոցներ և անձնական պաշտպանության միջոցներ հատկացվում են «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով հատուկ ուսուցումն անցնելուց հետո:

2. ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4. Ծառայողին արգելվում է հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները փոխանցել այլ անձանց կամ թողնել առանց հսկողության:

5. Ծառայողի՝ հատուկ միջոցներով և անձնական պաշտպանության միջոցներով ծառայողական գործուղման մեկնելու դեպքում գործուղման վկայականում նշվում են դրանց տեսակը, համարը, արտադրության տարեթիվը և հաստատվում ծառայության կնիքով:

6. Հայաստանի Հանրապետության տարածքում գործուղման դեպքում ժամանման վայրում հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցներն

անվտանգ պահելու հնարավորության բացակայության դեպքում գործուղված ծառայողը դրանք ի պահ է հանձնում մոտակա ոստիկանության բաժնի հերթապահ մաս:

7. Ծառայողին հատկացված հատուկ միջոցների և անձնական պաշտպանության միջոցների, դրանց տեխնիկական վիճակի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է՝

1) ծառայողի անմիջական ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ՝ ծառայողի ծառայության մեջ գտնվելու ժամանակ.

2) տվյալ ստորաբաժանման ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ.

3) տվյալ ստորաբաժանման սպառազինության համար պատասխանատու անձի (այսուհետ՝ հերթափոխի տեսուչ) կողմից՝ տարեկան մեկ անգամ:

8. Այլ ստորաբաժանում տեղափոխվելու, ծառայությունից ազատվելու դեպքերում ծառայողը պարտավոր է հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները հանձնել հերթափոխի տեսուչին:

9. Ծառայողական պարտականությունների կատարման ժամանակահատվածից դուրս հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները ծառայողն ի պահ է հանձնում հերթափոխի տեսուչին:

10. Ծառայողը, ստորաբաժանման ղեկավարի կարգադրությամբ, պարտավոր է հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները հանձնել, եթե՝

1) ծառայողի կողմից խախտվել են սույն կարգով նախատեսված հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները պահելու և կրելու պայմանները.

2) ծառայողը ժամանակավորապես մեկուսացվել է ծառայողական պարտականությունների կատարումից.

3) ծառայողն ազատվել է ծառայությունում ծառայությունից:

11. Հերթափոխի տեսուչին հանձնած հատուկ միջոցների և անձնական պաշտպանության միջոցների վերաբերյալ համապատասխան գրառում է կատարվում հատուկ միջոցների և անձնական պաշտպանության միջոցների հանձնման և ընդունման մատյանում:

12. Հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները կորցնելու կամ փչացնելու դեպքերում ծառայողը գրավոր զեկուցում է վերադասության կարգով:

13. Հատուկ միջոցները և անձնական պաշտպանության միջոցները գործադրելու և օգտագործելու դեպքերում ծառայողն անմիջապես բանավոր զեկուցում է վերադասության կարգով, իսկ ստորաբաժանում ներկայանալուն պես՝ նաև գրավոր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ